

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետությունում իրացվող կոշիկեղենի շուկայի վերաբերյալ

Ի . Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Բ Ն Կ Ա Բ Ա Գ Ի Բ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության» կողմից իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում իրացվող կոշիկի և կոշիկեղենի շուկայի ուսումնասիրություն, որը ընդգրկել է ԱԱՏԳ 6401-6405 (զանազան տիպի կոշիկներ անկախ նրանց ձևից և արտաքին տեսքից) ապրանքային ծածկագրերը:

Որպես հիմք է վերցված Հայաստանի Հանրապետության Մաքսային պետական կոմիտեի 2007թ. տվյալները, ըստ որի հանրապետություն է ներմուծվել՝

ա) Ընդհամենը 3.264.725 զույգ կոշիկ, որից ըստ ծագման երկրի.

✓ չինական-2.593.684 զույգ,

✓ իտալական-30.785 զույգ,

✓ այլ երկրներ-640.256 զույգ:

բ) 457.022 կգ նախապատրաստվածքներ, ֆուրնիտուրա, տակացուներ, որից՝

✓ 9000 կգ նախապատրաստվածքներ,

✓ 235.164 կգ տակացուներ և կրունկներ,

✓ 212.854 կգ ֆուրնիտուրա:

Ներմուծված հումքից միջին հաշվով պատրաստվել է 1.142.555 զույգ կոշիկ /ելնում ենք մեկ զույգ կոշիկը 400 գրամ քաշից/

Ըստ տեսչության մասնագետների կողմից իրականացրած արտաքին զննման հետևանքով հայտնաբերվել են հետևյալ թերություն-անհամապատասխանությունները գործող օրենսդրությանը.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության «Վաճառքի համար նախատեսված կոշկեղենի հիմանական բաղկացուցիչ մասերի նյութերի մակնշման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 31.09.2006թ. հ. 1259-ն որոշմանը.
2. ՄՊԽ Գոստ 19116-2005 Նորաձև կոշիկ. ընդհանուր տեխնիկական պայմաններ.
3. ՄՊԽ Գոստ 1135-2005 Տնային և ճանապարհային կոշիկ. ընդհանուր տեխնիկական պայմաններ.
4. ՄՊԽ Գոստ 26167-2005 Ամենօրյա կոշիկ. ընդհանուր տեխնիկական պայմաններ.
5. ՍՍՀՄ Գոստ 11373-88 կոշիկի չափսեր.
6. ՍՍՀՄ Գոստ 28371-89 կոշիկի սորտայնություն.

Ի Ի . Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ելնելով վերոնշյալ կանոնակարգող փաստաթղթերի պահանջներից կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում իրացվող կոշկեղենի գրեթե (96%-ը) չի համապատասխանում գործող պահանջներին և իր մեջ պարունակում է սպառողների առողջության, և իրավունքների խախտման էական տարրեր:

Մասնավորապես՝

Համատարած բացակայում է մակնշումը՝ ինչպես ներմուծված, այնպես էլ տեղական արտադրության պարագայում կամ ավելի մանրամասն՝

ա) չի պիտակավորվում կոշիկի բաղկացուցիչ մասերի վերաբերյալ տեղեկատվությունը (ինչից է պատրաստված կոշիկի երեսամասը, ներդիրը, տակամասը) օգտագործվող նյութերը,

բ) չի նշվում կոշիկի վրա կոշիկի չափսը (մասնակի դեպքերում), լայնությունը կրնկի բարձրությունը (համատարած),

զ) չի նշվում արտադրող երկիրը, եթե նշված է ապա իտալական է,

դ) կոշիկի վրա գրվում է արտադրող երկիրը, օրինակ՝ պատրաստված Իտալիայում կամ Իսպանիայում, որը չի համապատասխանում իրականությանը /եղնում ենք ներմուծման կամ արտադրությունը հիմանավորող փաստաթղթերից/ դրանք հիմնականում չինական, թուրքական, կորեական արտադրության կոշիկներ են կամ մակնշման տեղը գրված է mode Itali, որը թույրիմածության մեջ է գցում սպառողին,

ե) Կոշիկների մեծ մասի վրա առկա է ապրանքային նշանի կոպիտ խախտման դեպքեր,

զ) արտադրողների մոտ բացակայում են էտալոնային նմուշները:

Արտաքին զննման հետևանքով հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝

ա) կոշիկների մեջ բացակայում է սուպինատորը, /այս դետալը ամրացնում է կոշիկի կրնկամասի և թաթերի միջև ընկած տարածքը և թույլ չի տալիս այն չափից շատ ծալվել և ապահովում է կոշիկի ճկունությունը/ որոնց բացակայության պարագայում աճում է կոշիկի արագ մաշվելու և տակացույի կոտրման հավանականությունը և առաջացնում է հարթաթաթության հիվանդությունը, որի վերաբերյալ ունեցել ենք բժիշկ մասնագետների հետ մասնավոր հանդիպումներ և հավաստիացումներ:

բ) որոշ նմուշների զննման ընդացքում նկատվել են ներկաթափության դեպքեր, /ձեռքի անմիջապես շփման ժամանակ թե՛ կաշվի, թե՛ ներսի մորթու/, որը վկայում է կոշիկի արտադրության մեջ օգտագործված նյութերի անորակության և որի հետևանքը՝ ալերգիկ ֆոնի ռիսկի վկայությունն է,

գ) կարերը անհավասար են,

դ) քթամասի և կրնկի մեջ բացակայում են հատուկ (գրանիտոլ և այլն) նյութերը, որոնք փոխարինվում են սովորաբար, իսկ կրնկի պարագայում լինում են դեպքեր, որ ընդհանրապես դրանք բացակայում են,

ե) վրաքաշված կոշիկները (զույգերը) սիմետրիկ չեն,

զ) հաճախ կոշիկների ներսի մորթիները լինում են արհեստական, սակայն ներկայացված են որպես բնական,

է) Կոշիկի երեսացուի, ներքնամասի և տակացուններում օգտագործվող արհեստական մասերը անհայտ ծագում ունեցող նյութերից են բաղկացած, որոնք կարող են առաջացնել ալերգիկ հիվանդություններ, չի ապահովված ոտքի օդափոխանակությունը, որը սանիտարա-հիգիենիկ նորմերի կոպիտ խախտում է և վտանգավոր առողջության համար:

Այս բոլոր թերությունները վերաբերվում են կոշկեղենի բոլոր ենթախմբերին՝ մանկական, կանացի և տղամարդու:

111. Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

1. Ուժեղացնել Հայաստանի Հանրապետության կառավարության «Վաճառքի համար նախատեսված կոշկեղենի հիմանական բաղկացուցիչ մասերի նյութերի մակնշման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 31.09.2006թ. հ. 1259-ն որոշմանը կատարման նկատմամբ պետական հսկողությունը.
2. իրականացնել սպառողներին թյուրիմացության մեջ զգող ապրանքային նշանների կիրառման նկատմամբ պետական վերահսկողությունը.
3. ուժեղացնել ներքին շուկայում կոշկեղենի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը,
4. Ստեղծել նպաստավոր պայմաններ կոշկեղենի հավատարմագրված փորձարկման լաբարատորիայի ձևավորման համար /տվյալ պահի դրությամբ հանրապետությունում չկա գրանցված նման լաբարատորիա/, կամ ապահովել

որոշակի նմուշների փորձարկման հնարավորությունը այլ երկրների
լաբարատորիաներում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության

Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության

պետական տեսչության պետ՝

Ա. Ղազարյան